

Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1946

Կ. ՌԱԴԵԿ

ՖԱՇԻՍՏԱԿԱՆ  
ՀԵՂԱՇՐՋՄԱՆ  
ՎԱՆԳԵԼ  
ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ

9(43)  
n-14

ՊԵՏՀՐԱՍ

1931

ՅԵՐԵՎԱՆ

30 MAY 2011  
24 JAN 2006

9(43)

n 14

Կ. ԱՐԴԵԿ

ԺԱՐԱՏՈՒԹՅՈՒՆ  
ԺԱՄԱԳԻՒՅՆԱՔԵՆ  
ԶՊ Ժ Ա Ց Կ  
Ա Խ Ա Վ Ա Ր

# ԳԱԵՒՍՏԱԿԱՆ ՀԵՂԱԶՐՁՄԱՆ ՎՏԱՆՔԸ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ


5

三

1

3044

卷之三



Հ Ա Յ Ո Ւ 2015  
ՏԵՍ ԽԱԼ Ա 5

1946

Ա. Ռ Ա. Զ Ա. Բ Ա. Ն

Ներկա բըոշյուրն այն հոգվածների ժողովածուն  
է, զոր լուս տեսան «Պրավդա»-ում Գերմանիայի ընտ-  
րական պայքարի ժամանակ ու նրանից հետո: Վոչ մի  
քաղաքական փոփոխություն մտցնելու առիթ չեղավ  
նրանց մեջ: Այս բշոշյուրը տպագրության և հանձն-  
վում այն մոմենտին, յերբ գեռ վճռված չե, թէ՝ Գեր-  
մանիան ներկա Փաշիստական կառավարությունից,  
վոր փոքրում և բանվոր մասսաների մեջ այն տպա-  
գրությունն առաջացնել թէ՝ իբր ինքը գեռ յերկիրը  
կառավարում և զեմոկրատական կոնստիտուցիայի շըր-  
ջանակներում, մոտ ժամանակներում վոստյուն կզործի  
արդյոք գեպի մի կառավարություն, վորին մասնակ-  
ցեն նացիոնալ-սոցիալիստները, վորոնք բացարձակ  
կերպով իրենց նպատակ են գնում լիկվիդացիայի յեն-  
թարկել վեյմարյան կոնստիտուցիան ու բացել ի բաց  
հաստատել մօնոպոլիստական կապիտալիզմի Փաշիս-  
տական գիկտատուրան:

Այս փոխանցումը, պարզ է, ահազին նշանակու-  
թյուն ունի պրոլետարիատի համար: Այս խնդիրը բան-  
վորական շարժման ազատության մասցորդների, կո-  
մունիստական կուսակցության կիսալեզարտության վե-  
րացման խնդիրն է: Դա նոլեմբերյան հեղափոխության  
նվաճումների մասցորդները լիկվիդացիայի յենթար-  
կելու խնդիրն է:

1812 83

Հրատ. № 1576

Գրատիպար № 6305 (բ)

Պատվեր № 1215

Տիրամ 6000

Պետհրատի տպարան Յերևանում

Պիտական իշխանության լծոկները ձեռք դցելու  
փորձը բացահայտ ֆաշիստների կողմից, ֆաշիստական  
հեղաշրջումը հաջող ավարտման հասնելու փորձն, ան-  
կասկած Գերմանիայում առաջ կրերի գասակարգավիճն  
կատաղի կռիվներու չասունացող այդ գասակարգավիճն  
կոիվերում ավելի խոր լուսաբանություն են պահան-  
ջում, քան այն, վոր հեղինակը կարողացել է տալ հար-  
մարվելով լրագրական հոգվածների սեղմ ծավալին:  
Գերմանիայի յետովատերազմյան տնտեսական զար-  
գացման, տրեստների ու կարտելների աճման, ուղիու-  
նավացիայի, մանր բուրժուազիայի պրոկտարացման  
և ազրաբային կրիվութ արդյունքների վերլուծումը,—  
Գերմանական ֆաշիզմի զարգացման ընթացքի, գեր-  
մանական սոցիալ-դեմոկրատիայի ալլասներման, գեր-  
մանական կոմկուսի զարգացման նկարագիրը, կոմկուսի,  
վորը կոչված և գերմանական պրոլետարիատի զե-  
կավորի գերը խաղալու ընդուն Գերմանիայի ֆաշիո-  
տացման, նրա սոցիալիզացիայի համար մղվող պայ-  
քարում,—այս ամենն սննդուշտ պահանջում են խնամ-  
քոտ ու մանրազններն մշակումն: Այս խնդիրների մշա-  
կումը վոչ միայն տեսական, ալլ և զործնական մեծ  
հշանակությունունի: Յես հույս ունիմ, վոր մի խումը  
ընկերների հետ միասին ինձ կհաջողվի մասակա ամիս-  
ներում կատարել այդ աշխատանքը:

Մոսկվա, 1 հոկտեմբերի 1930 թ.

I  
ՅՈՒՆԳԻ ՊԼԱՆԸ, ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԿՐԴԱԽԱԾ  
ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՅԻ ՀԻՄՆԱԿԱՆ  
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Դեռ յերբեք այնպիս արագ չելին արդարացել  
կոմինտերնի նախագուշակումներն, ինչպիս այդ կա-  
տարպեց Յունգի պլանի նշանակության ու նրա հետե-  
լանքների վերլուծման վերաբերմանը:

Պատճառաբանելով Յունգի պլանի իրագործման  
համար իրենց վարած պայքարը, գերմանական սոցիալ-  
զեմուկլատները պատմում եյին բանվորներին, թե  
այդ պլանը կթեթեացնի Գերմանիայի տնտեսական  
զրությունը և հենց զրանով ել կրաքելավի գերմանա-  
կան պրոլետարիատի վճառկը:

Կոմունիստական ինտերնացիոնալն, ընդհակա-  
ռութեալ, պնդում եր, վոր՝ թե Յունգի պլանի համաձայն  
Գերմանիան սկզբի տարիներում ավելի քիչ պիտի վճա-  
րի, քան պիտի վճարեր Դառնեսի պլանի համաձայն,  
սակայն Յունգի պլանը կորի զբությունը Գերմանիա-  
յում, կհարկազրի գերմանական բուրժուազիային տըն-  
տեսական ձնշման ու քաղաքական տերբորի վողջ գա-  
յանությունը ծանրանալ ժողովրդական մասսաների վրա  
վորպեսզի նրանց վրա փոխանցի պլանի ծախքերը:  
Դեպքերի ընթացքն ամբողջությամբ արդարացը այդ  
առասպես, վորովհետեւ վերջինը հիմնված եր Գերմա-

նիայի միջազգային դրության ամենահիմնական և վորշող գործոնների անալիզի վրա:

Մինչ դառնասյան դաշնագիրը Գերմանիան բեպարացիոն վճարներն հատուցանում եր մասամբ չնշին գներով ծախծինով գերմանական ապրանքները, գերմանական արտադրության միջոցները, իսկ մասամբ ել արտասահմանի մանր-բուրժուական խավերին խարելով, Ինգարացիոն վճարումները նա տալիս եր աշահնելով մարկը: Կապիտալիստները, վոր գնում ելին զինն ընկած այդ մարկը. զրանով առնում ելին զեմանական ապրանքներու ու այդպիսով վաստակում ահազին գումարներ: Իսկ արտասահմանյան մանր-բուրժուաները, զրավելով մարկի ընկած. ցած տրժեքով, գնում ելին այն, հուսալով, վոր զինը կբարձրանա միոր: Երանե այս գործարենում կօրցըին հարյուրափոր միլիոններ: Կենան իր ժամանակին հաշվել ե, վոր Գերմանիան վճարել և Անտանտին խսկապես այնքան, վորքան գերմանական մարկ և արտահանել արտասահման: Ինչպես հայտնի լի մարկերի այդ առևտուրը,—իսկ նրա հետ կապված ե ինքնչափայի վողջ սիստեմը,—անկժան հացը գերմանական մարկին, եկամուռապիտացիալի յենթարկեց մանր բուրժուազիայի ամենալայն խավերին ու այնուհետև Գերմանիայի զբանական սիստեմը վերաբերության մեջ գործություններին մեջ: Այդ մասին մասին առաջարկությունների մեջ:

Այդ դաշնագրի հիման վրա Գերմանիան վճարեց ինը միլիարդից ավելի բեպարացիոն տուրքեր: Այս ամբողջ գումարը վճարվեց աբտարքին փոխառությունների միջոցով: Գերմանիան մոտ 16 միլիարդ մարկի

արտաքին փոխառություն կնքեց, վորի մեծագույն մասը գործադրվեց բեպարացիայի վճարման համար, իսկ փոքրագույն մասը ծախսվեց վորպես նոր ներդրություններ արդյունաբերության մեջ, կապիտալիստական ուսցիոնալացման համար:

Տարեկան տկրու այդ փոխառությանների դիմաց ներկայիս հասնում ե մեկ միլիարդի:

Յունգի զաշնագիրը վարոշ պարզություն մտցրեց Գերմանիայի պարտավորությունների մեջ: Այդ պահնի համաձայն Գերմանիան պարտավորվում է հարկ վճարել վոչ պակաս քան 58 տարի: Քանի վոր Յունգի դաշնագիրը նախատեսում է առելտրականցնել Գերմանիայի պարտավորությունները—այսինքն բորսայի միջոցով այդ պարտավորությունները համապատասխան պետություններից փոխանցել պետական արժեթիվ զնողների լայն խավերի ձեռքը, Գերմանական բուրժուազիան չի կարող այլևս կատակ անել վճարումներից հրաժարվելու մտքի հետ, առանց հարցական նշանի տակ զնելու իր առելտրական վարկը: Այդ իսկ պատճառով սեպարացիաների վճարման ինդիքը գարձակ գերմանական եկոնոմիկայի ամենալուրջ խնդիրներից մեկը: Բայց պարզ ե, վոր արտասահմանան կապիտալիստներն անվերջ չեն նպաստի Գերմանիային փոխառություններով, քանի վոր Նրանց ավելի ձեռնուու յե ողտագործել Գերմանիայի գժվար կացությունը, զնելու համար գերմանական արժեթիվներն ու որլիգացիաները, վորոնք աբտասահմանյան կապիտալին տալիս են վնչ միան շահի մի մասը, այլ ճանապարհ են բաց անում զեպի վողջ շահը:

Գերմին տարիներու արագ տձում է արտասահ-

մանցան կապիտալի ձևուրն անցած խոշոր ձեռնարկների կամ ակցիաների կոնսուլային ծրաբների քանակը: Գերմանական կապիտալիստների համար այս բանը չաճախ ներկայանում եր իրքի միակ յելք՝ սուեդված կրությունից, սակայն մի յելք՝ վոր սպառնում է գերմանական բուրժուազիալին մեծ մասամբ գարձնել լոկ վարպետ արտասահմանան ձևունարկներում, լոկ շիրմա արտասահմանան կապիտալի համար:

Պարզ է վոր այդ գերը այնքան ել ցանկալի չե գերմանական բուրժուազիայի համար: Այդ պատճառով ել նա իր առաջ խնդիր է զնում կրնատել կախումն արտասահմանից, կապիտալի պահանջը, ինչպես արդյունարերութիւնն զարգացման, այնպես ել ուղարացիոն փոխառություններն հատուցանելու համար, — ավելի լոյն չափերով բավարարել անմիջապես գերմանական աղբյուրներից

Բայց այս նպատակներին համելու համար մի ճանապարհ կա միայն—Գերմանական եկաղորդի հալիքն ուղին, վորի վրա և կենտրոնանում են գերմանական բուրժուազիայի բոլոր ջանքերը: Այս խնդիրը մինչ այժմ լուծվում եր բավական հաջող կերպով: Դարձատատի աղքալին բանկի ղեկուցման մեջ մենք գտնում ենք հետևյալ թվերը:

1926 ից մինչև 1929 թվվը Գերմանիան իր եկա պուրեն ավելցրեց 3 միլիարդ մարկով: 1929 թվին նրա առևտրական բաւանուը գալարեց պասուիվ լինելուց, նա գրեթե հաստի իր արտահանության նախապատճենակի մակարդակին: Ազգ արտահանությունն 1924 թվին հավասար եր համաշխարհային արտահանության 6,1 տոկոսին: 1929 թվին նա հասավ համաշխարհային ար-

տահանության 12 տոկոսին: Նախքան ոլտերազմը նա հավասար եր 13<sup>1/2</sup> տոկոսի:

Այսպիսով Գերմանիան համաշխարհային առևտրի մեջ մուտեցավ իր նախապատերազմյան մասնակցության չափին: Ներկայիս առևտրի ասպարիզում նա հանդիսանում է յերկրորդ պետուրլունը համաշխարհային շուկայում և ընթանում է անմիջապես Հյուսիսային Սմերիկայի Միացյալ Նահանգների յետից:

Այս լերեսությը խորին մտահոգությամբ մատնանըցից անզլիական պարլամենտում հուլիսի 16-ին արտասահմած իր ճառում անզլիական պահպանողականների առաջնորդ Բոլդուինը:

«Ամենից վատն այն է, վոր պատերազմից հետո առաջին անգամ գերմանական եկաղորդար զերազանցում է մերին: Սա ամենատաքննապաի լուրերից մեկն է վոր յիս ստացել եմ յերբեք: Մանավանդ յեթե ինկատի առնեք այն փաստը, վոր մեր եկաղորդին խփում է այն զերմանիան, վոր իր տարածությամբ փոքր և նախապատերազմյանից»:

Յեկ ամերիկական, և զերմանական եկաղորդան աճում և ինչպիսի այն յերեւյթի, վոր կլանում է անգլիական բաժինը համաշխարհային եկայություն:

Այս պլոցեսով չի կարող շարունակվել անզլիրջ: Անզլիան այս դրության դեմ զիմում է հուսահատ միջնորդի, վորձում և այս կամ այն կերպ անցնել պրոտելցիոնիզմի (հովանավորող քաղաքականության):

Բայց Միացյալ Նահանգները նույնպես կուլ են ոկսել արդեն զերմանական եկաղորդի դեմ, մացնելով բարձր պրոտելցիոնական (Քովանավորող) տարին: Այս հանգամանքը չափազանց լուրջ արգելքներ և հարուցանում գերմանական եկաղորդի առաջ:

Պ. Ուռեն Յունիլ՝ «Յերոպակի փրկիչը» իր կառլիֆորնիայում արտասանած աղմկաբար ճառում ցինիկաբար նշում և Յունդի պլանի բնույթը:

«Յերոպական պետություններից լուրաքանչյուրը գանգատվում և Ամերիկային ունեցած իր պարտքի ծանրությունից, թեպես և մենք ընդուած գնացինք կանոնավորելու այդ պարտքիը շատ ձեռնտու չափով նրանց համար, Բայց նրանք մեծ հավատ ընծայեցին Գերմանիային, վճռելով, վոր նա մենակ կարող և տանել ամբողջ ծանրությունը, նույն իսկ ավելացնելով այն 50 տոկոսով»:

Իրապես Յունդի պլանը վոչ այլ ինչ և ներկայացնում իրենից, ինթե վոչ մի գաշնագիր, վորի ոգնությամբ Անտառայի բոլոր պետությունները հարկադրում են Գերմանիային վճարել իրենց փոխարեն Ամերիկային:

Բայց իբր Գերմանիան այդ պարտքերը վճարելու համար փոքրում և ուժեղացնել իր եկամուրտը, Հյուսիսային Ամերիկաի Միացյալ Նահանգներն իսկույն ձգտում են փակել այդ ուղին նրա առաջ, աղաղակելով, թե՛ Գերմանիան ուժեղացնում է իր եկամուրտը արտադրության ինքնարժեքն իջեցնելով, սովորականավարձի միջոցով:

Ամերիկայի այդ կշտամբանքներն հիմնավորված են, Գերմանական ուայիլնալիքացիան իսկապես կատարվում եր սովի աւխատավարձի հիման վրա: Բայց այդ մասին քաջ հայտնի յեր Ամերիկային, յերբ քարոզում եր Գերմանիային ուայիլնալիքացիայի անհրաժեշտության մասին և խորհուրդ տալիս նրան ինալող լինել ծախսերի մեջ: Գիլլեր Պարկերը, Ամերիկայի ու

Անտառայի կողմից նշանակված վերահսկիչը գերմանական ֆինանսների վրա գառեւսան զաշնադրի տիրապետության ժամանակ, յուրաքանչյուր պատեհ դեպքում դուրս եր գալիս Գերմանիայի ամեն մի սուցիալական նպատակների համար գործադրվող ծախսքի դեմ, կոմմունալ հիմնարկների, սոցիալական ապահովագրության և այլն միջոցներով բանվորների կենցաղի մակարդակը բարձրացնելու գեմ: Յեկ գերմանական նրանքուագիան կանգնած և այն փաստի առաջ, վոր ինթե կամենում և նա ավելացնել իր արտահանությունը, չնայելով ամերիկական նոր տարիքին, չնայելով Անգլիայում պըռտեկցիոնիզմի սպառնացող հաղթանակին, ապա ամենապարզ միջոցն և այսուհետեւ յելու չնիել բանվորի բողաքին, ավելի, ևս նվազեցնելով նրանց աշխատավարձը, վորը, ինչպես մենք ցույց կտանք հետագայում, առանց այն ել մուրացկի մակարդակի վրա ին կանգնած:

Սակայն եկամուրտի հավելումը պահանջում է աշխատավարձի նվազումն վոչ միայն այն պատճառով, վոր աշխատահմանում զարգանում և պըռտեկցիոնիզմը: Յեթե գերմանական բուրժուազիան պիտի փորձի ընդլայնել իր եկամուրտը, հենվելով առաջին հերթին իր սեփական ուսուրաների վրա, ապա կավիտալակուսկում, վորին նա հասել և ներկայիս—իսկ նա աշխատավարձի մասին իշխանության մեջ մասնակի ավելի ևս պիտի ավելացվի: Այս խնդրի հետ նորից ու ավելի ուժեղ թափով առաջ և գալիս աշխատավարձի իջեցման հարցը, Բայց խնդիրը միայն աշխատավարձի իջեցման մեջ չի: Բուրժուազիան փորձում և պակասեցնել սուցիալական բոլոր ծախսքերը, գործադրությների, ինվա-

Աղջերի; հեղանգների աղջանգման և կուլտուրական  
կարիքների ծախքը:

Դերմանական բուրժուազիան վրդավմանքով  
մասնացնեց և անում այն փասով, վոր պատերազմից  
հետո ավելացած սոցիալական ծախերով իր վկին և  
փաթթել բանվոր դասակարգի պայքարի, հեղափո-  
խության վտանգի հետևանքով և վոր այն ծախքերի  
իր ուժերից վեր են: Նա հաշվում է, վոր այդ նպա-  
տակների վրա ինքը ծախսում է տարեկան 5 միլիարդ  
մարկից ավելի:

Յեզ ահա հենց այդ նինդ միջիարդ մարկն է, վոր  
նաև կայսեր պետք է նեան, 2 միլիարդը պետք և ունա-  
բացիաները վճարելու համար; մեկ միլիարդը՝ արտա-  
սահմանյան փոխառությունների տոկոսը: Յեզ քանի  
վոր ներքին կռատակումները բավական չեն արդյու-  
նաբերությունն ընդլայնելու համար, ապա ուրեմն  
շատ տեղին պետք կդա նացած 2 միլիարդը: Բայց  
այս նպատակին համուլտոն համար պետք է ամենավլա-  
ռական կերպով վերջ տալ «գերմանական բուրժուա-  
զիայի գերությանը պըսլետարիանի ձեռքում»: Մենք  
վճարում ենք տարեկան յերկու միջիարդ Անտառային  
նրա համար, վոր նա մեզ հաղթեց: Մենք վճարում ենք  
գերմանական պրոլետարիատի տարեկան ինք միջիարդ  
նրա համար, վորպետքի նաև մեզ չնոնդի: Մենք չենք  
կարող հրաժարվել Անտառայի պարտքերը վճարելուց  
վորովհետև նու ուժից և մեղանից, սակայն մենք ներ-  
կալիս ավելի հզոր ենք, քան բանվորները և բնակ  
շենք կամենում այլևս ծախքեր անել այդ բոլոր «ու-  
շիալական ավելորդությունների» վրա, ինչպիսիք են  
զործագուրկների ապահովումը, հիվանդ բանվորների

բժշկությունը, ամեն տեսակի բաղնիսների ու ման-  
կական հրապարակների կառուցումը, վորոնց վրա  
կուռնաներն իրը ծախսել են 2 միլիորդ. Առանց  
զրանց եւ լուս կդնան: Ամերիկական բանվորները  
չկատեն վոչ հիվանդությունից վոչ զործագըկությու-  
նից ապահովումն և վոչինչ, ապրում են Աս բանը  
մինչի իսկ զրառում և նրանց եներկիան: Նրանցից  
ամեն վոք զիտե, վոր ինքն և հոգալու իր մասին:  
Գերմանական ազգը, ազգակում եր Պ: Շախտը՝  
պետական բանկի նախկին զիրեկտորը, վոր տարեկան  
200 հազար մարկ «նպաստ» և ստանում հայրենիքին  
մատուցած հավատարիմ ծառայության համար, — բաղ-  
կացած և ունտա ստացողներից: Յերբ ծնվում և նե-  
մեցը, նրա որորոցն ևն կոխում ապահովագրումը  
մահվան զեղքից: Աս բանին պետք և վերջ տալ:  
Ֆինանսների մինիստր Մովլունգառերը, ներկարա-  
րական տրեստի անդամ, Կոլոնի համալսարանի ողբո-  
գիստը, պաշտոնից հեռանալիս պահանջեց տարեկան  
վոչ պակաս քան 30 հազար մարկ հատուցումն, այն  
բանի համար, վոր հայրենիքն հրաժարվում է նրա  
մատուցած ծառայությունից: Սակայն յերբ ֆինանս-  
ների մինիստրի պաշտոնումն եր, նա ամենապերճա-  
խոս կերպով ապացուցում եր, վոր բանվորները պար-  
տավոր են զոհաբերել հայրենիքի ոգտին, հրաժարվել  
ավելորդ փարթամությունից և վոր այդ բանը կծա-  
ռայի նույնիսկ իրենց բարեկին, վորովհետև վորքան  
հաջող կուտակվի կապիտալը, այնքան լավ կներգրա-  
վի նա զործագուրկներին և վերջին հաշվով, ինչ վոր  
կլուզի այժմ բանվորից, այն կվերագարձվի նրան ա-  
պագային:

Յունգի պլանի վորց ծանրաբյունը բանվոր դասկարգի ու մանր բուրժուազիայի վրա փոխանցելու համար մղվող սրայքարը ահա բովանդակությունը Դերմանիայում ևելի աւելցող դասակարգային այն մեծ կրանիվների, վառ ներկայիս ծավալվում են յետի վարունեկ կանչուռաված ելին Յունգի դաշնագիրը կենելու մռմենից: Այդ կրտիքները սրվում են շնորհիվ համաշխարհային կրկնիքի:

Պ. Գիլֆերդինգն, իբրև Փինանսների մինիստր՝ հեւս ուներ—իհաշիվ այն առարկեռության, վոր գուտթուն ուներ Դատուսի դաշնագրով կատարվելիք վճարումների և այն վճարումների միջն, վոր վորպես վիջում սահմանված ելին Յունգի դաշնակրի սկզբի տարիների համար,—ծածկելու պետական ամրող կուտակված դեֆիցիտը: Նա մինչև իսկ խոստանում էր ձեռնարկել այն հարկերի թեթևացման, վորսնք առանձնապես ծանր ելին բուրժուազիայի համար վորպեսզի վերջնու կարողանա ավելի եռ լավ կուտակել հայտարարելով այդ անհրաժեշտ պրոլետարիատի շահի տեսակետից:

Յերբ պ. Գիլֆերդինցը պաշտոնից թուավ ու նրա տեղը բռնեց Մոլլենդառուերը՝ պարզվեց, վոր գերմանական դեֆիցիտը զգալի չափով ավելի բարձր է: Մոյլդենդառուերն հաշվից այդ դեֆիցիտը 1400 միլիոն ու զրա համաձայն սլահանջ զրեց հարկ դնել ժողովրդական մասսաների վրա: Սակայն պ. Մոյլդենդառուերը գեռ չեր կարողացել իրագործել իր գինանսական ծրագիրը, չեր պարզվեց, վոր դեֆիցիտը հավասար է վհչ թե 1400 միլիոնի, այլ նույնիսկ 2500 միլիոնից եւ ավելի յի: Պ. Մոյլդենդառուերն

ստիլված եր նորից համապատասխան չափով լաբձրացնել իր հարկալին ծրագիրը:

Դժվար չէ հասկանալ, թե՛ ինչն եր պատճառը դեֆիցիտի այս անզուսպ աճման: Համածխարհային կրիզիսը կը ճատկեց բուշեցի լեկամտալին մասը և միենալու ժամանակ անզուսպ կերպով ավելացրեց գործադրկությունն և նրա հետ կազմած ծախքերը: Այն միջոցները, վոր գանվում են գործազուրկներին վճարող համապատասխան հիմնարկների ձեռին, կարող են բավարել միայն 900 հազար գործազուրկների նպատը: Մինչդեռ զործազուրկների թիվը ներկայիս Դերմանիայում հավանորեն 3 միլիոնից պակաս չի լինի:

Այսպիսով առաջ յեկավ վոչ միայն իին ծանրությունները մաղութական մասսաների վրա փոխանցելու խնդիրն, այլև հսկայական նոր բեռներ եռա վզին բարձելու հացը:

Բացարձակ անմոռություն կլիներ փորձել գերմանական բուրժուազիայի գինանսական պլանների ուստիկերը տալ: Նա ներկայացնում է իրենից անզուսպ կերպով աճող զանազան հարկերի խառնիճաղանչ մի կույտ, վոր հնարում են գինանսների մինիստրության չինովիկները, դեֆիցիտի աճման հետ զուգընթաց: Սկավեցին զոքա զարեջը, սուրձի, թեքի, սելտերլան ջրի հարկերի ավելացումով:

Հարկեր սահմանվեցին կոոպերացիալի շրջանառության աճման վրա: Դրան հետեւց մասնավոր ծառայուների հատուկ հարկադրումը: Այնուհետև ըստ հերթական կարգի նշված են հարկեր չամռանացած աղջիկների ու աճուրդի աղամարդկանց վրա: Այն աղջիկը, վոր չի կարողանում իրեն կյանքի ընկեր գըտ-

նել, իր դարդն իրեն ձերիք չե, զեռ հարկ ել սիսի  
վճարի զբա համար, ինչպիս և յերիտասարդ մարդա-  
ոյացը (միզանտրուպը), վոր կամովին համաժարվում ե  
ընտանելան կյանքի յերջանկութիւնից: Բայց ով  
վճռում և խեր հայրենիքի շահերի կապել ամուսնա-  
կան կապերով ու կյանք պարզել Գերմանական Հան-  
րապետության նոր քաղաքացիների, նաև ես ազատ  
չե հասուել տուրքից, վոր գերմանական լեզվով կրում  
ե ավելի մատերիալիստական անուն՝ «գլխահարկ»,  
իսկ ուստիրեն՝ ավելի իդեալիստական՝ «հոգահարկ»:  
Հոգու հարկը հավասար չափով պիտի վճարի ամեն  
հոգի և միլիոները՝ և բանվորը Այսպիսի հարկ ներ-  
կայիս զեսես զոյսություն ունի միմիայն դադութնե-  
րում այդ պատճառով ել այդ հարկն ստացավ՝ «նեղ-  
րական հարկ» անունը:

«Յեթե մի բողե մտարերենք, թէ 1919 թվին  
նշանակած այսպես կոչված «պաշտպանության տուր-  
քը», վոր ընդամենը 500 հազար մարկ եր, ինչպիսի  
պայքար առաջացրեց, ապա կարելի կլինի պատկերա-  
ցնել, թէ ինչպիսի խառնշփոթություն և առաջ բերել  
ներկա հարկային քաղաքականությունը: Մինչև ան-  
գամ այնպիսի կապիտալիստական թերթն, ինչպիսին  
ե Վիեննայի «Ֆրիե-Պրեսս»-ն, չի կարողանում ինքն  
իրան զսպել վոր գերմանական հարկային քաղաքա-  
կանությունը չանվանե մահակի քաղաքականություն:

Ան այս դրության եյին այն սոցիալ-տնտեսա-  
կան ինդիրները, վոր պիտի լուծել Գերմանական  
բելիստագն և վորոնք չնաշաղվեց նրան լուծել Այն  
ինդիրները, վոր բելիստագի առաջ եր գրել զեռ  
Մուսլիմի կառավարությունն ու ավելի ընդհուպ մո-


աեցը ել Բըյունինգի կառավարությունը, տեղաբ-  
ժում և մաքերի մեծագույն խռախորյուն առաջ բե-  
րին բուրժուական բոլոր կուսակցությունների մեջ, Նրանք  
պատրաստ եյին հսկալական հարկեր բարձել պրոլե-  
տարիատի վղին, բայց կովեցին իրար մեջ, յերբ պարզ-  
վեց, վոր դա բավական չե, վոր պետք և հարկադրել  
նաև չինովութիւններին ու ծառայողներին: Սոցիալ-գե-  
մոլիտաները պատրաստ եյին հարկադրել և բանվոր-  
ներին, և մանը բուրժուազիային, բայց կամենում  
եյին միաժամանակ պահպանել վորոց պատշաճություն  
խռախությունի հարկերի ամենազգվելի ձևերի պատաս-  
խանագույնությունից:

Բայց խոչոր կապիտալը շատ ել չի սիրում իր  
լակելների նման ծամածությունները կեր, թոչնիկս,  
իմ ձեսից, կամ սատկիր: Թուչնիկը չկարողացավ վո-  
րոշ վճիռ կայացնել, յերկյուղ կրելով, թէ այդ կերա-  
կրից ևս կսատկի: Բայց ախր ձուան անգամ ուզում է  
ապրել: Ազդ պատճառով ել բուրժուազիան վճռեց վերջ  
տալ այս թնձուկին ու հասնել լիակատար պարզու-  
թյան:

II

## ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՅԻ ԻՄՊԵՐԻԱ- ԼԻՍՏԱԿԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Գերմանիայի ներքին ու համաշխարհակին շուր-  
կայում գոյութիւնն ունեցող տնտեսական հակասու-  
թյունների սրումը չե միմիայն, վոր հարկադրում և  
գերմանական բուրժուազիային ծավալել արշավը բան-  
վոր գասակարգի վեցաշուրջամի ֆաշիստացնելու պե-



տությունը՝ Նույն ահնդենցները բղխում են այն նոր, արտամիԱ-Քաղաքական խնդիրներից, վորոնց առաջ գերածանական բուրժուազիալին կանդնեցրեց այսպիս կոչված հաղթող պետությունների ուժերի փոխարարերության մեջ առաջ յեկած փոփոխությունը:

Մինչ այդ գերմանական բուրժուազիան արտաքին քաղաքականության տասլարիվում վճռում եր ըստ եյության յերկու իրար հետ կապված խնդիրները նա կովում եր նախ Թրանսիական իմպերիալիզմի փորձերի դեմ—դուրս գալ այն սահմաններից, վարանց մեջ դրել եր նրան վերսալյան դաշնագիրը յեվ յերկրորդ՝ իր վճարումներին «Տանելի չափեր» նշանակելու համար:

Վերսալում Ֆրանսիան աշխատում եր Գերմանիայի մերձրեխնան մարզերից մի բուժիր պետություն ստեղծել վորն իր քասսալական տիրապետության տակ լինել: Ռիխն իրեն ստհման Ֆրանսիայի և Գերմանիայի միջն նշանակում եր, վոր կարելի լի անջատել հարավային Գերմանիան Մայնի գծով և նախատեսում եր, վոր Գերմանիայի պաշտպանությունն անարավոր և միայն վեզեր գետի վրա: Խնդրի այսպիսի լուծման հետեանքը կարող եր լինել Գերմանիայի խոլառ վոչչացումն իրեն ինքնուրուցն քաղաքական ֆակտոր Յեվրոպայում և Փրանսիական իմպերիալիզմի լիակատար հեգեմոնիան մայր ցամաքում: Այդ պատճառով ել թէ Անգլիան և թէ Ամերիկան հակառակ կանդնեցին Փրանսիական պլաններին ու հարկադրեցին Ֆրանսիալին հրաժարվել նրանցից, վրավելով Կրամանոյին Փրանսիական նվաճումների գալրանիայի խոստումով Անգլիայի ու Ամերիկայի կողմից:

Յերբ ամերիկական սենատը մերժեց վոչ միայն

վելլասնի խոսանցած յերաշխավորող դաշնագիրն, այլ ժիւմանը նույնիսկ վավերացնել վերսալի պայմանագիրն ու մերժեց Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգների Ազգերի Լիգայի մեջ մտնելու հարցը, Թրանսիան վերանորոգեց իր ձգումները՝ անջատել մերձրեխնան նահանգները Գերմանիայից: Պուանկարեն, առավել ևս նրա յետև կանգնած վիճական խմբակները, ոչտվում եյին Գերմանիայի ռեպարացիոն պարտավորություններից, վորպեսզի Գերմանիային քայլայման հասցնեն ու դրանով իրենք հնարավորությունը ունենան մնալու մերձրեխնան նահանգներում: Պուանկարեյի քաղաքականությունը, վորի հետեանքով նա գրավեց Ռուրը, մերձրեխնան նահանգների բավարար դրեց սուր սվինների վրա: Ռուրական խանդիրը դրեց սուր սվինների վրա: Ռուրական սիր գերի տապալումից հետո միայն, յերբ պարզեց, վոր Ռուրը դրավելին ավելի հեշտ և, քան այնտեղ քարածուի հանելը, յերբ պարզվեց, վոր Փրանսական սեսսիակարից Ֆրանսիայի ուժերից վեր և Ռուրի քարածուակին ավագանում մնալը, — նա ձեւնարկեց դառւեայն գործարքին, վոր ապահովում եր իր ուսպարացիոն վճարների սաացումն, սակայն խաչ եր դնում այլիս իր նվաճողական քաղաքականության հետագա ծավալման վրա: 1930 թվին սենյան ըջանների մաքրումը դաշնակից զորքերից հետեանք եր միայն այն փաստի վոր Անգլիան ու Ամերիկան բույլ չը տվին Թրանսիական իմպերիալիզմին հաստատել իր հեգեմոնիան Յելլուրոպայում այն սահմաններից գուրս, վոր ընդգծել եր նրա համար վերսալյան դաշնագիրը և վոր Փրանսիան հնարավորություն չուներ հակառակ նրանց կամքի առաջ գնալու:

Գերմանիան ոգովում եր քրտնոխական, անզլիաշ  
կան ու ամերիկական իմպերիալիզմի շահերի այս հա-  
կասությունից, բայց վերջին հաշվով նրան վիճակից  
վճարել լրացուցիչ դին՝ կամովին ընդունել ֆրանկո-  
գերմանական այն սահմանը, վոր բռնի փաթաթել  
եյխն նրա վզին վերսալի պայմանագրով (Լոկարնոյի  
դաշնագրի) և համաձայնել Յունիվ պայմանագրով վո-  
րոշված չափականց բարձր վճարումներին, վոր ստոր-  
կացնում ելին իրան 59 տարով։ Սանեն մի վորմ ուղիւ-  
յան նահանգների մայրամբ ցուցադրել իրենի միջբն  
վերասյի դաշնագիրը սեղմելու; իրենի սկիբզն երա վե-  
րաբենուրյան – ուղղակի ծիծաղելի յէ։ Մեյնի նահանգներ-  
ի մայրամբ նահանգներ ե այն; վոր Թրանսիան չի կու-  
րադառամ վերասյի ողբաների վրա նոր ողբաներ ավե-  
լացնել։ Սակայն Վերասյի ողբաներն իրենին մնում են  
անձեռնելինիք։

Յունիվ պայմանագրի վճարումները, վոր սոցիալ-  
դեմոկրատները ցուցադրում ելին իրեն թեթևացումն,  
իրեն «խելոք» բանկիրների հաղթանակ անխելք գե-  
ներալների գեմ\*) հավասար են ծամ բության այն սահ-  
մանին, վոր վերասյան բանակցությունների ամե-  
նայնուն միջոցին ամերիկական բանկիրներն՝ ինչպես  
կամունքը, անզլիական ֆինանսական հքսպիրտներն՝  
ինչպես Կեյնոը, կամ հենց ինքը Զերչիլը, – հնարավոր  
համարեցին բարձել հաղթանարված Գերմանիայի վզին։  
Սակայն այդ չնչին հետեանքներին ել չեր կարո-  
ղանա հասնել Գերմանիան, յեթէ հետեեր միայն «կա-  
տարման» քաղաքականության, ինչպես համեստարար

\*) Տես Գերմանի «Քաջական գազետա»-ի հոդվածը Հասկայի  
լուսաբերեցիայի ժամանակակիցը։

Գերմանիայի սոցիալ դեմոկրատներն անվանում ելին  
Սնտանտին հոգածակվելու քաղաքականությունը  
Գերմանիան նույնիսկ այդ իր համար միանդամայն  
անմիտիթար հետեանքներին հասավ միայն այն պատ-  
ճառով, վոր թեև վախվելով, շարունակ սպառն եռում եր  
Անտանտին Խորհրդային Միուրյան որդենտագիայով։ Գեռ  
իր պատմական մեմորանգումների մեջ, վորոնց ոգնու-  
թյամբ Լույդ-Զորջը 1919 թվի մարտին փորձում եր  
յետ կանգնեցնել Թրանսիային մերձուինյան բութե-  
րային պետություն սահղթելու պահանջից, բութուա-  
կան այդ խելքագույն քաղաքակետը նախազգուշաց-  
նում էր գանցակիցներին խորհրդային-գերմանական բլո-  
կի հնարավոր բրունից։ Լույդ-Զորջը տեսնում եր այդ  
վնանդը սպարտական շարժման հաղթանակի ձևով  
վորը կարող ե ոգտվել գերմանական ժողովրդի հու-  
սահատ զրությունից, մի հաղթանակ, վորը մեքենաս-  
րեն պիտի միացներ կոմմունիստական Գերմանիային  
և Անտանտին հետ։ Բայց նույնիսկ նրանից հետո,  
յերբ գերմանական բութուազիալին հաջողվեց ժամա-  
նակավորապես հաղթել պրոլետարիատին ու հետա-  
գել այդպիսի միություն սահղթելու հնարավորու-  
թյունը, Անտանտան յննթագրում եր, վոր «հաղթող  
պետությունների» հակասությունները կարող են վա-  
րոշ միրժեցում առաջ բերել գերմանական բութուա-  
կան հանրապետության ու խորհրդային հանրապե-  
տության միջև։ Գերմանական բութուազիան սպավեց  
Անտանտի այդպիսի մերձեցման յերկուողից ու ձեռ-  
նարկից բազարային դաշնագրին, վոր վերացրեց մինչ  
այդ չվճռված հին խնդիրները և հանապարհ բացեց մի  
շարք նոր ակտերի, վորոնց մեջ Գերմանիան ու ԽՍՀ  
Միությունը դուրս եյին գալիս միասին։

Այդ քաղաքականությունը, վար շարունակ ննում  
է գործ դնում Անտառի վրա, այդ հականաշվեհարդարը  
Անտառին ակնկալած բոլոր զիջումներին, ԽՍՀՄ-ի  
հետ մերձենալու քայլով — հանդիսանում եր այն պատ-  
ճառներից մեկը. վորի շնորհիվ Թրանսիային չը հա-  
ջողվեց իրազորեն իր ծրագրը լիտակու: Յեզ միան-  
գամացն իրավացի ին զերմանական լուրջ հրապարա-  
կախոս Ադոլֆի Քրատովսկին, յերբ զրում ե թե՝ «ա-  
ռանց Արևելքի ոպնության միանգամացն հոգս կցնդեն  
մեր արենական բոլոր հույսերը»\*).

Մերձու ելիյան նախանձների գրավման լիկիդիտացիան  
իբերին նար և դնում գերմանական բուրժուազիայի ա-  
ռաջ՝ հետո ի՞նչ: Այս չի կարելի ժողովրդական մաս-  
սաներից պահանջել, վար ապրեկան 2 միլիարդ հարկ  
վճարեն հենց միայն նրա համար, վոր կայզեր Վիլհել-  
մը տանու տվեց պատերազմը և վոր Շորեզեմանին  
հաջողվեց իրանախացիների ձեռքից ազատել մերձ-  
ուինյան նահանգները: Այդ ժողովրդական մասսանե-  
րին պետք ե ցուց տալ վորեն նետազա պերապեկտիվ,  
թեկուզ խարսափի հնարավորություն Գերմանայի  
ներկա դրության թիմեացման: Ալսպիսիով վերմանա-  
կան արտաքին բաղակականուրյան մի շրջանի ավարտման  
փասը հենց ինքը նոր խնդիրներ և առաջազրում գեր-  
մանական բուրժուազիային: Բացի դրանից այդ խրն-  
դիրներն առողջ են զալիս միջազգային դրույյան ակրի-  
նայ փոփոխության հետեւանելով:

\* ) Իր հրատարակած «Zeitschrift für Politik» ժուրնալի  
հումկի համարում:

Անտառին դադարել ե այլեվս գյուրյուն ունե-  
նալուց: Անգլիայի աչքն առաջին հերթին դեպի ով-  
կիանոսի այն կողմն եւ Նա ստիպված յեղակ 1928  
թվին Միացյալ Նահանգների հենց առաջին ահեղ կան-  
չին, հրաժարվել այն դաշնագրից, վոր կնքել եյին  
Բրիտան ու Զեմքերլենը, վորը վերականգնում եր Ան-  
տառնախոս նոր բազայի վրա—Անգլիան ընդունում է  
Թրանսիայի հեգեմոնիան ցամաքի վրա և Թրանսիան  
մասչում ե Անգլիայի հեգեմոնիան ծովի վրա:

Լոնդոնի ծովային կոնֆերենցիալում անգլիական  
իմպերիալիզմը վնչ միայն չը համարձակվեց պաշտպա-  
նել Թրանսիայի պահանջներն իրեն ծովային առաջ-  
նակարգ պետությունների շաբաթը դասելու վերաբեր-  
մամբ, այլ նույն իսկ հակառակեց այդ պահանջներին,  
վորոնց իրազործումը կզժվարացնելին իր գրությունը  
Միջերկրական ծովում: Իտալիան—Թրանսիայի դաշ-  
նակիցը համաշխարհային պատերազմում, դարձավ նրա  
բացարձակ թշնամին ու սկսեց կովի պատրաստվել  
Թրանսիայից իւլիու նրա գաղութային վորսի մի մասն  
ու վասրելու նրա ազգեցությունն Յեվրոպայի հարավ  
արևիլից: Իտալիան լուցարձակորեն բարձրացրեց վեր-  
սալան դաշնագրի վերաբենուրյան դրոշն հանուն իր  
իմպերիալիստական շահերի: Բայց իր այդ նպատակի  
համար նա դաշնակիցներ և վորոնում, վորոնց ան-  
շուշտ հարկադրված պիտի լինի վճարել իտալական  
պահանջները պաշտպանելներուն համար, ինքն ևս  
պաշտպանելով նբանց սեվիլյունիստական (վերաբնա-  
կան) ձգուումներն ուղղված Թրանսիայի ու նրա վաս-  
սալների վեմ: Դերմանական դիվլումատիան տեսնում է  
ին Անտառի բայխուրյումը, նոր հակասությունների բու-

թեղացումն և պատրաստվում է նա ինքնուրաւն դեր խաղալ բուկի մանելով նրանց հետ, ովքեր ավելի կը տան իրեն:

Գերեանական զիայլոմատիան դեռ հնարավորություն չունի բացարձակ դուրս գտնու իր ծրագրով: Առաջին նա հասկանում է, ինչպես տառմ է պրոֆեսոր Գիտչը—հայտնի պահապանողական մասնագետ արտաքին քաղաքականության («Գեոպոլիտիկ» ժուռնալի 1930 թ. հուլիսի համարում տպագրված իր «Հնարավոր և արգուք Գերմանիայի արտաքին քաղաքականություն» հոդվածում),—վոր «այսոր դեռ չի ստեղծվել մեծ պետությունների այն համախմբումը, վորը հնարավոր ու անհրաժեշտ դարձելու բխմարկան հաղորդականությունն իր նպատակներով»:

Անգլո-ամերիկական հակասությունն առանցքն և հանդիսանում բառը ապագա համաշխարհային հակասությունների: Սակայն այդ առանցքի շուրջը դեռ ամուր չեն դասավորվել մյուս բոլոր հակասությունները, դեռ հայտնի չեն ուստի կերպան ֆրանսիան ու իտալիան: Ազգ իսկ պատճառով գերմանական արտաքին քաղաքականությունը խոսափում է պարտավորություններից, վորոնք կարող են ժամանակից տուաջ կապել իրեն: Սակայն նա արգեն շարժման մեջ և մըտել, ամեն ուղղությամբ ածմծում է հոգը, նախապատրաստում է «հասարակական կարծիքը» ամրագծ աշխարհում, ու չափ է բափում—առայժմ դեռ վերալյան պայմանագրի շրջանակում, իր սեփական զինված ուժերը մեծացնելու ուղղությամբ:

«Ա» զրահակը կառուցումն սկիզբն և հանդիսանում նավաշինարարական ու արտիլերիական տեխնի-

կայի նորագույն նվաճումների ողագործմանը Գերմանիայի կազմից, սահզծելու համար մի նավատարմ վոր կարողանա զործել հեռավոր տարածության վրա: Գերմանիայի զինվարական շրջաններում ծրագիր և մշակվում վերակազմելու շեյլւալիեր, նոր հիմունքներով, չերք իմպեցիոնատական պետությունների բոլոր բանակցությունները «զինաթափման» մասին կը վերջանան վճռական պարտությամբ, վորն աղես հնարավոր չի լինի ծածկել:

«Զինարավությունը — զինավորման հավասարությունն է», գրում է պրոֆեսոր Գետչն իր այն հողվածում, վորից մենք մեջբեռություններ արինք, այդպիսով իսկական անունը տալով այն նպատակի, վորին ձգտում է Գերմանիան, զիմակի տակ մտած, պահանջելով իրագործել վերաբերան զաշնազրի այն հողվածը, վոր խոսանում է նվազեցնել բոլոր պետությունների զինումը: Գերմանական կիսապաշտոնական հրատարակչությամբ լույս տեսավ բեյլիսավերի նախկին հրամանատար գեներալ Սիկոփ գիրքը՝ «Յերկրի պատըստանությունը» վերնագրով, վորը ցույց է տալիս, թե գերմանական բուրժուազիան ինչպես ե պատկերացնում իր նոր բանակը: Դա պետք է լինի վարձու մի բանակազմած 200 հազար հոգուց, հրաշալի սովորած, զինված ուղղմական տեխնիկայի վերջին խոսքի համաձայն, կարված ժաղովրդից ու կուրորեն նպատակվող գերմանական բուրժուազիայի ամեն մի հրամանին:

\*\*

Սակայն ի՞նչ նպատակներ է դնում իր առաջ գերմանական բուրժուազիան արտաքին հայտականության

ասպարիզում: Այդ նպատակներն հայտնի յեն և կալա-  
նում են հետեւալում՝ ձեռք բերել սպառազինման ա-  
գատություն, վոչնչացնել լեհական կորիդորը, միացնել  
Պրաւիտն մեացյալ Գերմանիայի հետ, միացնել Վերին  
Սիլեզիան, միացնել Ավստրիան, սասնալ գաղտքներ: Հասկանալի յէ, վոր այս նպատակները միանգամից  
չպիտի իրազործվեն բոլորը և միատեսակ նշանակու-  
թուն չունեն ամենքը: Այս բոլորի բանալին ե հան-  
դիսանում բանակի մեծացնելն ու լեհական կորիդորի  
վոչնչացումը:

Լեհական կորիդորի նշանակությունը նրա-  
նում չի կայանում, վոր այն տեղ ապրում են վորոշ  
թվով գերմանացիներ, թեև գերմանական հրապարա-  
կախոսությունը շատ և սիրում խոսել լեհաստանի  
գերմանական փոքրամասնության տանջանքների մա-  
սին: Այդ կորիդորը վերացնելու նշանակությունը չի  
կապված նաև հարաբերության կապը հեշտացնելու  
խնդրի հետ, վորովհետեւ այդ ասպարիզում լինացիք  
հանձն տոան շատ հեռուն տանող զիջումներ և հալո-  
նորեն պատրաստ հն վերացնել զժոնության ամեն մի  
առիթ այդ ասպարիզում: Խնդրի նշանակությունը զուտ  
ստրատգիական է, (ռազմագիտական): Պատերազմի գեպ-  
քում լինական կորիդորը անջատում և Գերմանիայի  
զինվորական ուժերը, Գերմանիան ծովով միան կարող  
եր զորքերը փոխադրել Արևելյան Պրուսիա, պաշտ-  
պանելու համար նրան լինական հարձակումից: Բայց  
այդ քանի վոր կորիդորը գտնվում և լինացիների  
ձեռին—Պողոսնը, Տորնը և Գրառուդենցը,—լիների ձե-  
ռին և և Բերլինի վրա արշավելու բանակն: Ունինա-  
ւու և այդ նահանգները, նույնու և Վերին-Սիլեզիան

իր ձեռին, Գերմանիան պատերազմի գեպքում կկա-  
րողանա արշավել անմիջապես վարշավակի վրա, բըու-  
նելով նրան ունելիքի մեջ, ինչպես արեց այդ չին-  
դենքուրգը 1915 թվին: Գերմանիայի ստրատգիական  
դրույան փոփոխումը գերմանական բանակի վերականգ-  
դման հետ միասին—ահա այն լծակը, առանց վորին գեր-  
մանական իպերիալիզմն անկարող և իր քերերը տարածել:

Յիրկար վիճաբանեցին այն հարցի շուրջը, թե  
վերականգնած և արդյոք գերմանական իմպերիալիզմը,  
թե վոչ: Իմպերիալիստական քաղաքականության ըա-  
զան հանդիսանում և մոնոպոլիստական կապիտալիզմը,  
վորը վոչ միայն չանհետացավ, այլև ուժեղացրեց իր  
իշխանությունը Գերմանիայում: Սակայն անտեսական  
իշխանությունը Գերմանիայի համեմատաբար ավելի թու-  
ռեսուրսները Գերմանիայի հիմնամատաբար միջազգային  
լացան պատերազմի անհաջող վախճանի, միջազգային  
շուկայի նեղացման, և այն տուրքի շնորհիվ, վոր սա-  
քմարում և Անտանտային:

Բավական և ասել—վորի վրա յես մատնացուց  
արի նախորդ գլխում, —վոր կապիտալի կուտակումը  
ալժմյան Գերմանիայում հասել և միայն նախապատե-  
րազման մակարդակին, այն ժամանակ յերբ սրված  
կոնկուրենցիայի հետևանքով Գերմանիայում կապիտա-  
լի կարիքը անսովոր չափով մեծացել է: Այդ պատճա-  
ռով ել կապիտալի արտահանությունը Գերմանիայում  
զգալի չափով ցածր և քան պատերազմից առաջ: Գեր-  
մանիան չունի վոչ մի զաղութ: Բայց վոր ավելի ևս  
կարենը և գերմանական մոնոպոլիստական կապիտա-  
լիզմն ունի ջարդված լեղունգներ—անհան նավատորմ  
ու թուր անբավարար սպառազինված բանակ: Գերշա-  
պես նա ընկալ աշխարհագրական մի այնպիսի գրու-

թւան մեջ, վորը նրա ստրատեգիական ծավալումը դրեց նոնալը չահսնված մի կաշկանդիչ շրջանակի մեջ: Գերմանական իմպերիալիզմի գոյության կամ չկոյության ինդրի շուրջը տեղի ունեցող վիճը, վճռում և պատմության դիալկտիկայի հիման վրա: Գերմանական իմպերիալիզմը վոր ջախջախեց պատերազմի մեջ, չի կորցրել իր բազան, գերմանական մոնոպոլիստական կապիտալիզմը մնաց ապրելու և զորանալու համար: Յեկ նա կովում և վերականգնելու համար իմպերիալիզմի զենքերը՝ կապիտալի արտահանություն, հզոր բանակ ու նավատարձ, կովում և գրանց ստրատեգիական ծավալման պայմանների համար, վորպեսզի համապատասխան մոմենտին մասնակցի իմ գերիալիզմի հակաների ճակատամարտին, աշխարհի նոր փայ-բաժանման համար:

Գերմանական իմպերիալիզմը պատրաստվում է կրո-փի իր զոյսրյան պայմանների համար: Այս բանը շատ շավ հասկանում և ֆրանսիական իմպերիալիզմի և Բրիտանի պան-յեվրոպական պակտի առաջարկը, վոչ այլ ինչ և յեթի վոչ Յելլոպալում խաղաղություն հաս-տատելու քողի տակ, դաշնակցության առաջարկ գեր-մանական իմպերիալիզմին, Ֆրանսիայի հեգեմոնիան բնութեալ հիմունեալով: Քաղաքականապես ֆրանսիական առաջարկներն հանգում են նրան, վոր Գերմա-նիան լեհական սահմաններն են ընդունի, ինչպես ընդունեց ֆրանսիական, վորի փոխարեն ֆրանսիան թույլ կոտ նրան մեծացնել բանակը, փոխառություն կտա գերմանական արդյունաբերությանը, կպաշտպա-նի նրա պալքարը համաշխարհային շուկայի համար և նրա գաղութային ձգտութեալը: Ֆրանսիայի համար —

ինչ ամեն վոչ պակաս, — խնդիրը նրանումն է, թե պա-տրազմի դեպքում իր բիկունիում նա արդյուն քենամի կունենա, վորին անշուշ կզինեն Ֆրանսիայի քենամի ները, թե կունենա դաշնակից, վորին վարձահատուց լինելու համար, վորը բաժանելիս, կրտսեր խաղընկեր կդարձնի իրեն: Գերմանական պատմախանը ֆրանսիական նշանակում և թե Գերմանիան համա-ձայն և բանակցություններ վարել վախկոտ, բողարկված կերպով, հայտնելով միաժամանակ, վոր այդ բանակցու-թյունները չեն կարող սահմանափակել վերաալյան վո-րուումների շրջանակով,

Այդ բանակցությունները դժվար թե տվյալ պայ-մաններում վորենի վերջնական վորու հետեւանք ունե-նան: Գերմանիան չի կարող բացարձակ կերպով դնել նան սահմանների վերաքննության հարցը, վո-րովհետեւ նա հասկանում է, վոր վոչ մի պետություն չի համաձայնի խաղաղ կերպով զիջել մի տերիտորիա, վոր կաղում և նրան ծովի հետ ու տալիս ահազին ստրատեգիական առավելություններ: Այս իդեան, թե Լեհաստանին կորիգորը կորցնելու փոխարեն կարելի լի վարձահատուց լինել ֆելերացիայի ձեռլ տալով կլելու լիտվանի իր լելքով գեպի Բալտիկ ծովը Մելելի կլելու լիտվանի առ լելքով գեպի Բալտիկ ծովը Մելելի վրայով կամ... հորիցլային Աւերախիան - չափագնց սրամիտ իդեա յեւ Բալց Լեհաստանն այս դեպքում պիտի հրաժարվի նրանից, ինչ ունի արգեն ու փո-խարենն ստանա մուրհակ, վորը գետ պետք և զեղչել զենքը ձեռին, պատշազմի միջոցով, լուրջ վասնզի յենթարկելով նույնիսկ Լեհաստանի գոյությունն ան-դամ: Այս բանն հասկանում են Գերմանիայի ավելի խելանեղ իմպերիալիստները: Այդ պատճառով եւ, ինչ-

## ՖԱՇԻԶՄԻ ՅԵՎ ՍՈՑԻԱԼ-ՖԱՇԻԶՄԻ ՄԻԶԵՎ

1. Милые бранятся только тешатся

Ոեկնատագն արձակելուց հետո, գերմանական սոցիալ-գեմոկրատիան դուրս լեկավ մի հոչակավոր կոչով, վորի մեջ հայտարարում եր, վոր՝ սեպտեմբերի 14-ը դա վճռական մաքարի որ և բուրժուական բլոկի ու սոցիալ-գեմոկրատիայի միջեւ, աշխատանքի ու կապիտալի միջնվ, դեմոկրատիայի ու ֆաշիստական գիկտառալի միջնվ: Նա կոչ եր անում բանվորներին աջակցել իր ձեռք բերել այժմ, վորան կարելոր և ակտիվ բաղական հետախուզությունը, վորը կասի թե՛ ինչ կտան ուրիշները:

\* \* \*

Այսքանը բավական է, վորպետղի հասկանալի լինի վոր գերմանական բուրժուագիան կանոնած և մի խնդրի առաջ, վորը պահանջում է իր ձեռքը կենտրոնացնել ամբողջ իշխանությունը պետական ապարատի ու մասաների վրա, պահանջում է անկախ լինել պարլամենտական ապարատի տատանությունից, ապարատի, վոր խախտվել է յերկու զուուժին քաղաքական կուսակցությունների կոփմսերից: Գերմանական բուրժուագիան համապատըստվում է կոփմսերի, վերականգնելու համար իր իմպերիալիստական հզորությունը: Բոլոր բուրժուական կուսակցությունները ֆաշիստացնելու համար մզգող պայքարը պետական ապարատը ֆաշիստացնելու պայքարը—բղիսում են ալդ իմպերիալիստական ին գիրներից նույնպես, ինչպես և ըղիում են տնտեսական դժվարություններից:

Սիրալի՛ր պատկեր: Մի կողմից պարոն Շոյլցը, տուած ներկայացուցիչը տրեստացած կապիտալի, սիրկարը լիբրանին, աջ կողմից կարգածատերերի ներկայացուցիչ Շելլենի ուղեկցությամբ, յերկարձիտ կողիկներով ու կանաչ կուրտկախով ձախ կողմից՝ տերտերական կուսակցության ներկայացուցչի նիհար ու յերկար բրյունինգի ուղեկցությամբ: Բոլոր ալս յերեքի առաջից քայլում ե սովային ոփիցեր մինիստը Տրեվիրանուսը, § 48-ի վերաբռնած Հինգենբուրգի պատկերը հետեւյալ մակագրությամբ՝ «Կեցցե Փաշիստական գիկտառուբան»: Յեվ այս բուրժուա-ֆաշիստական ոճի դեմ վոր Փշալով պատրաստվում է խեղել բանվոր գասակարգը, ոլանում ե ձիու վրա 8 փ: հսկան՝ սոցիալ-գեմոկրատ Վեյլսը, մի ձեռին նիզակ, մյուսին կարմիր զրոշակ, վրան մակագրած՝ «գեմոկրատիայի

ու սոցիալիզմի համար»։ Հընշալի նախընտրական պր-  
լակաս։ Բայց դժբախտաբար, այդ պատկերը չափա-  
ղանց գեղեցիկ է, թե չե կհամապատասխաներ իրա-  
կանության։

Ու ձերուկ արհին կտառ—կենտրոնի ներկայացու-  
ցիչը-չղլացավ խնդրել պարոն վելլիքն ցած գալ ձիուց։  
Ախր սոցիալ դեմոկրատիան, —նենդությամբ հիշեցրեց  
նա պարոն վելլիքն, — բազմիցս ինքն և անցկացրել իր  
քաղաքականությունը 48 հոդվածի սկզբությամբ, այ-  
սինքն պարտմենտի իրավունքները կրծատելով, հա-  
գուտ պրեկունուի դիկտատուրական իրավունքներին  
Ախր չե վոր սոցիալ-դեմոկրատիան Պրուսիայում ջուխա-  
ձեռքով կպել և նույն կաթոլիկական կենտրոնի կոս-  
լիցիալին, կենտրոնի վորին տքնում և նա համաշխար-  
հային մասշտաբով հայտարարել դժոխքի ճնունդ։ Վեր-  
ջապես, — հարցնում և այնուհետև պարոն կատար, —  
այդ ի՞նչպես եք զուք կամենում փրկել դեմոկրատիան  
կոմունիստների հետ միասին, վորոնք կողմնակից ու  
պաշտպան են պրոլետարիատի դիկտատուրային և Հու-  
գենբերգի ու Հիդերի հետ միասին, վորոնք կողմնա-  
կից են ու պաշտպան ֆաշիստական դիկտատուրայի։  
Ախր դուք նրանց հետ միասին քվեարկեցինք Բրյու-  
նինքի կառավարության դեմ։ Յեթե գուք այսուհետեւ  
ել պիտի շարունակեք նույն խաղը խաղալ ապա կա-  
թոլիկական կենտրոնը ձեզ զուրս կշպրտի պրուսական  
կառավարությունից։

Ի՞նչ պատասխանեց սրան սոցիալ-դեմոկրատիան։  
Իպատասխան սրան Բուգոյլի Բրեյշելլը — անցյա-  
լում հույսեր տվող մի յերիտասարդ առևտրական կա-  
պիտակի կողմից, ներկայիս սոցիալ դեմոկրատական

պրովենիոնալ ձոսոմաբանության ու գիտլումատիալի  
ասպարեզում, — դուքս յիկավ հուլիսի 30-ին «Ֆոր-  
մերու» ի մեջ մի հոգվածով, վոր պարունակում է  
շափտղանց արժեքավոր խոստովանություններ անց-  
յալի վերաբերմամբ ու չափազանց գնահատելի խո-  
տումներ ապագայի վե աբերմամբ։ «Յուրաքանչյուր  
անկողմակալ մարդ պիտի ընդունի վոր սոցիալ-դե-  
մոկրատիան ամեն հնարավոր միջոց գործադրեց, մի-  
տյի թե խուսափի պարւամենատական շրջանակներից  
դուքս գտնվող քաղաքականությունից։ Մենք առա-  
ջարկեցինք մեր գործ վկցուրյունի ֆինանսական ոեֆորմի  
անցկացնելիք, բայց մեզ յետ երեցին ու չուզեցին սեզ  
նետ վարել վաշ մի լուրջ բանակցուրյուն։ Զուզեցին ու  
շելին կարող շատել բանակցուրյուն, վարօնիետել Բրյու-  
նինքի կառ վարության իւսուսն այն եւ, վոր սոցիալ-դե-  
մոկրատիալին երի դեպ անհույս ուղղողիցիան։»

Բրեյտշտելլը խոստովան ու ե, վոր սոցիալ դե-  
մոկրատիան պատրաստ եք զործակցելու Բրյունինքի  
կառավարությանը, վոր նա պատրաստ եք նրան ոգ-  
նելու, բայց չուզեցին նրա հետ խոսել նրան վատրե-  
ցին, վոնդեցին։ Բայց չե վոր ախր Բրյունինքի կա-  
ռավարությունն, ինչպես ասում է սոցիալ-դեմոկրա-  
տիայի նախընտական կոչը, արեսաների ու կարտել-  
ների կառավարություն ե, մի կառավարություն, վոր  
բոլոր ծանրությունները բարձում ե բանվոր գասա-  
կարգի վզին, ֆաշիզմի կառավարություն։

Յեվ պապիսի խոստովանությունից հետո պ. Բր-  
եյշտելլը քաջությամբ հայտարարում է, վոր սո-  
ցիալ-դեմոկրատները չեն վախում կապերը իրեն կեն-  
տրոնի հետ և Պրուսիայում, վոր նրանք թույլ չեն տա-

կենարսնի կուռակցությանը պայմաններ թելափքել իրենց, թե ինչպես վարեն նախընտրական կամպանիան Բայց անմիջապես այս հերոսական ժեստից հետո, նա շարունակում է. «Կոքիլը կենարնի հետ, վար մեր վզին վարեցին, մենք կամեմ և ենք տանի գործական կերպով սակայն մեր այդ գիտակորությունը հետ չի դառնելու, յեր մեզ ոպանում են»:

Սոցիալ-ֆոշիստներն հայտաբարելով, թե՛ նաև խընարական պայքարը՝ աշխատանքի ու կապիտալի, գեներալի արագածությունը ու փաշիզմի, սացիալիզմի ու կապիտալիզմի պարզաբ ե, խոստանում ե այդ պարարը տաճնել «գործնական կերպով», առանց վիրավորելու այն կուսակցությանը, վոր մասնակցել ե ազգային ժաղավարություններից հետո Գիշմանիայում զոյլություն անցեցած բոլոր 19 կոսովարությունների մեջ, վորն այդպիսով հանդիսանում էր գիշմանական բուրժուազիայի հաղանական-հիմնական կուսակցությունը: Պ. Բրեյտշեյզը զիտե, թե ինչո՞ւ այդպիս քաղաքավարի ու տակառվ պետք ե պատասխանել քանի վոր, բացի չարամությունից, ու սպառնալիքից սոցիալ-գեներալի հասցելին, նաև կինարոնի առաջնորդ արհի կասով ճառի մեջ գտնել ե և մի ուրիշ համառոտ կտոր, վորն առում է, թե՛ մոտիկ ապագայում քաղաքական կուսակց ությունների վերախմբումից հետո, թիւմս հաջողվի՝ մի կամուրջ պահպանել բուրժուազիայի ու հանրապետությանն հավատարիմ բանվարչութեանիվ: Հին յեղիքարը դբանով առում է սոցիալ-գեներալիային: Մենք ձեզ կառավարությունից դուրս կապտենք, բայց հույսերդ մի կտրենք ու ապահիները մի փետե, ով զիտե թերեւս դարձալու համաձայնության գոտի:

Այս արդեն բավական և համկանալու համար թե  
վճրքան իրականության չեն համապատասխանում սո-  
ցիալ-դեմոկրատերի պնդումները թե՝ կուիլը տեղի ունի  
առաջին ներքին իր ու բուրժուական կուսակցություն-  
ների միջնորդ յեվ վոր այդ կուիլի առարկան հանդիսանու-  
ե դեմոկրատիզմի պատճանուրյուն։ Բայց դրությունն  
ավելի ևս բարդանում է, յեթև հաշվի առնենք, վոր  
համեմատաբար ավելի բացահայտ ֆաշիստական խմբա-  
գորումները—Հուգեներգի յեվ Հիտլերի խմբերը, —նպա-  
տեցին ու սպանեցին տապալելու Բրյունինզիլի կառավարու-  
թյունը, յեթև զիտենք այն վերախմբանիլը, վոր տե-  
ղի յեն ունենում բուրժուազիալի բանակում, ներկա-  
մունկության առաջ բերելով լիակատար քառոսի տպավո-  
րություն։ Վորպեսզի հասկանալի լինի, թե՝ ներկա-  
լիս ինչ և տեղի ունենում Գերմանիալի բուրժուական  
բանակում, պետք ե գոնե համառոտակիի պատասխա-  
ռնել մի շարք հիմնական հարցերի—առաջին հերթին  
ֆաշիզմի ելուրյան մասին յեվ ֆաշիզմի ու սպացիալ ֆա-  
շիզմի միջնորդ յեղած տարբերության մասին։

## 2. Ֆաւհիզմի ելությունը

Մենք այստեղ չենք կարող, ինարկե, մանրա-  
նորեն պարզել ֆաշիզմը ու սոցիալ ֆաշիզմի հարցն  
առջևապես Բայց այդ կարծուր ել չէ մեզ: Մեր նը-  
ատակի համար բավական է հիշել, թե Կոմիտեինի  
ոլինուումում ինչպես եր գրված ֆաշիզմի բնույթի  
նորա բազմատեսակություն հիմնական խնդիրն և  
միանգամացն աւզիդ գրումը կիրառել Գերմանիա-  
տեղի ունեցող անցքերի նկատմամբ:

կենարոնի կուսակցությանը պալմաններ թելագրել իրենց, թե ինչպես վարեն հախընտրական կամպանիան։ Բայց անմիջապես այս հերսոնական ժիստիդ հետո, նա շարունակում էր «Կոքվը կինուրնի հետ, վար մեր վզին փառեցին, մենք կամենում ենք տանել գործնական կերպով, սակայն մեր արդ փիտակորությունը հետ չի դառնում, յերբ մեզ սպառնում են»։

Սոցիալ-փաշտական հայտարարելով, թե՝ նախընարական պայքարը աշխատանքի ու կապիտալի, գենոկատարակալի ու ֆաշիզմի, սոցիալիզմի ու կապիտալիզմի պարքար եր խոստանում ե այդ պարքարը տանել «գործնական կերպով», առանց վիրավորելու այն կուսակցությանը, վոր մասնակցել և ազգային ժողովի ընտրություններից հետո Գերմանիայում զոյտյուն ունեցած բոլոր 19 կոսովալորությունների մեջ, վորն այդպիսով հանդիսանուեց եր գերմանական բուրժուազիայի բալաֆական-հիմնական կուսակցությունը։ Պ. Բրեխովշյալը զիան, թե ինչո՞ւ այդպիս քաղաքավարի ու տակուալ պետք և պատասխանել քանի վոր, բացի չարամտությունից ու սպառնալիքից ուցիալ-գենոկատարակալի հասցեին, նա կենարոնի առաջնորդ արհի կատար մեջ զտել և և մի ուրիշ համառոտ կտոր, վորն առում եր, թե՝ մոտիկ ապագայում քաղաքական կուսակցությունների վիրախմբութից հետո, թերեւ հաջողվի՝ մի կամուրջ պահպանել բուրժուազիայի ու հանրապետուրյանն հավատարիմ բանվարչութերի միջև։ Հին լեզվալը զբանով առում է սոցիալ-գենոկատարակային։ Մենք ձեզ կոսովալորությունից դուք կեպրտենի, բայց հույսերդ մի կտրել ու ապսիկելու մի փոքր, ով զիտե բերելու դարձայ համաձայնություն գտնի։

Այս արդեն բավական և հասկանալու համար թե՝ վորքան իրականության չեն համապատասխանում սոցիալ-դեմոկրատների պեղումները թե՝ կոմիտը տեղի ունի առաջին հետքին իր ու բուրժուական կուսակցությունների միջեւ յեզ վոր այդ կոմիտ առարկան հանդիսանուել դեմոկրատիայի պատասխանություն։ Բայց դրությունն ավելի ևս բարդահում է, յեթև հաշվի առնենք, վոր համեմատաբար ավելի բացահայց ֆաշիստական խմբավորությունը՝ Հուգենբերգի յեզ Հիտլերի խմբերը, նպաստեցին ու սպանեցին տապալելու բրյունինցի կառավարությունը, յեթև դիտենք այն վերախմբութիւնը, վոր տեղի յին ունենում բուրժուազիայի բանակում, ներկամումներին առաջ բերելով լիակատար քառսի տպավորություն։ Վորպեսզի հասկանալի լինի, թե՝ ներկայիս ինչ և տեղի ունենում Գերմանիայի բուրժուական բանակում, պետք ե գոնե համառոտակի պատասխանել մի շարք հիմնական հարցերի՝ առաջին հերթին մասին յեզ ֆաշիստական մասին։

## 2. Ֆաշիզմի ելուրյունը

Մենք այսուղ չենք կարող, ի՞մարկե, մանրումանորեն պարզել ֆաշիզմը ու սոցիալ-ֆաշիզմի հարցն ամբողջապես։ Բայց այդ կարևոր ել չե մեզ։ Մեր նը-պատակի համար բավական և հիշել թե կոմիտերնի Ն ոլինում ինչպես եր գրված ֆաշիզմի բնույթի ու նրա բազմառուսական թյան հիմնական լանդիրն և այդ միանգամայն ուզիղ գրումը կիրառել Գերմանիայում տեղի ունեցող անցքերի նկատմամբ։

Յեթե նալինք իմպերիալիզմի<sup>4)</sup> բնութագրությանը նվիրված մարքսիստական նախադասքերազման գրականությունն, — ինչպես տհարանական, այնպես և պրոպագանդիստական, — ապա մենք կգրունք այստեղ իմպերիալիզմի բաղականության հետևյալ բնութագրություրը: Նա մեծացնում է զինված ծախսերը, նվազեցնում սոցիալական ռեֆորմների վրա զորագրվող ծախսերը, սահմանափակում է պարզամենի իրավունքներն ու նշանակությունը, մածացնում է տեսների ու կարտելների անմիջական աղղեցությունը պետական քաղաքականության վրա: Նա նշանակում է բուժութական գենուկրատիվ խորակումն, համաշխարհային պատերազմների վտանգ յեվ պրոլետարիատի հեղափոխական ապահովությունը պետական քաղաքական պարագաների կերպով աչքի ելին ընկում մանուպոլիստական կապիտալի քաղաքականության այս գծերը, ամենազեղցին կերպով պատկերացնում է Զեկ Լոնդոնի «Յերկաթի գարշապար» վեպը, վոր զրված և նույնպես պատերազմից առաջ և, վորի մեջ հմուտ նկարիչը, փորձելով իր ստեղծագործական ֆանտազիայով պատկերացնել իրեն ֆինանսական կապիտալի տիրապետության տեսդենցները, տվել և մի պատկեր, վոր կանխատեսում և Փաշիզմի վորջ սանձանարությունը, Փաշիզմի, վորը պատերազմից հետո իր ամբողջ ծանրությամբ հարձակվեց բան-

<sup>4)</sup> Բագական և որինակի համար վերցնել Հրլիքը կոչել է Ֆինանսական կապիտալի գերշին յերեք պատկերը, կամ վերջին գլուխն իմ «Գերմանական իմպերիալիզմը» բրոյալիքի վոր հրատարակեց 1913 թվին և ապա արտադրվեց «Գերմանական հեղափոխությունը» գրքում, հաս. I, յերես 125—135:

վոր դասակարգի վրա: Այս, ինչ ամեն որ տեսնում եր Զեկ Լոնդոնը դեռ պատերազմից առաջ ամերիկական մոնոպոլիստական կապիտալի պրակտիկայում, հետարարություն սկզբ նրան ստեղծել մի պատկեր, վորը մենք այժմ չենք կարող կարգալ առանց հիացմունքի:

Դեռ պատերազմից առաջ հեղափոխական մարտիկմն արդեն հաջիվ եր տախո իրեն այն մասին, վոր մոնոպոլիստական կապիտալիզմի բաղադրամությունը տանում է վո՞չ միայն դեպի պատերազմներ, այլև զարգացնում է այն տեսդենցները, փորոնք տանում են դեպի գեմուրատիվի փոխանակումը բանկերի ու կարտելների բացարձակ դիկտատուրայով, բայց ծանրությունները բարձելով պրոլետարիատի վրա, խելովով այն գեմուրատական ազատության ներք գործում եր իրեն համար տանակակենությունը բասկացողությունը: Պակասում եր միայն «Ֆաշիզմ»-ի ընդհանուր հասկացողությունը: Սակայն բոլոր Ֆաշիստական տեսդենցներն իրենց սկզբնական ձևով դեռ պատերազմից առաջ արդեն կային մոնոպոլիստական կապիտալիզմի բաղականության մեջ:

Բրանդերյանների տեսարան Տալգերներն, հիմնականում նույնացնելով Փաշիզմն ու բոնապարտիզմը, Փաշիզմի մեջ տեսնում և միայն կապիտալիզմի պաշտպանության քաղաքականություն ընդգետ պրոլետարական հեղափոխության, բայց չի տեսնում, վոր մոնոպոլիստական կապիտալիզմն այդ պաշտպանությունը տանում է իրեն հատուկ հիմնական տեսդենցների զարգացման և ուժեղացման ոգնությամբ: Սական վհչ պակաս սխալ և Փաշիզմն համարել հենց միայն մոնոպոլիստական կապիտալի քաղաքականություն յեվ վոչ թե մոնոպոլիստական կապիտալի բաղականության հա-

մաշխառհային հեղափոխության օրջանում։ Յերկու հայտցակետներն ել անտես Են առնում մոնոպոլիստական կապիտալիզմի զարգուցումը։

